Ազգ
Azg
armenian daily

12 ՅՈՒՆԻՍ 2001 ԵՐԵՔՇԱԲԹԻ 107 (2311)

# Ամերիկայում մատաղ անողներին պատժում են

ԹԲԻԼԻՍԻ։ Կավկազպրեսի մի լրագրող պատմում է, որ վերջերս 4 վրացիներ Մ. Նահանգներում զոհ են դարձել «իրենց» ազգային սովորույթին։ Նրանք, բոլորն էլ Վրաստանի Սվանեթի շրջանից, Ֆիլադելֆիայի (ԱՄՆ) շուկայից ոչխար են գնել եւ որոշել են բնության ծոցում մի լուրջ քեֆ անել։ Ինչպես տեսնում եք՝ բոլորովին բարի նպատակ։ Սակայն վերջին պահին «մցվադին» հարամ է եղել։ Նրանց ձերբակալել է ոստիկանությունը, որն անակնկալի է եկել՝ տեսնելով, որ բոլորի աչքի առաջ «վայրենի կովկասցիները» ոչխար են մորթում։ Ձերբակալմանը հետեւել է փաստաթղթերի ստուգումը եւ պարզվել է, որ 4 վրացիներն էլ անօրինական են մնում Ամերիկայում։ Հետեւել է նրանց արտաքսումը երկրից։ Վրաց տաղանդավոր կինոռեժիսորների համար հրաշալի սյուժե հանդիսացող այս միջադեպը կարող է լավ դաս դառնալ նաեւ «վայրենի կովկասյան» մեկ այլ ժողովրդի՝ հայերիս համար։ Ուստի, նկատի ունեցեք, Ամերիկայում մատաղ անողներին պատժում են, մանավանդ, եթե մատաղացուն ոչխար է։

ԹԵՀՐԱՆ

# Եռանախագահների մոսկովյան հանդիպմանն ակնկալվում է դեսպան Քոլեյնիի մասնակցությունը

*Իրանի ԱԳՆ ԱՊՀ գլխավոր վարչության պետ Ղոլաքաբադին ԼՂ հարցի, խողովակաշարերի, տարածաշրջանային համագործակցության մասին*

**ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ**
**Թեհրան**

«Մենք սպասում ենք ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների եւ որպես մեր երկրի ներկայացուցչի՝ Հայաստանում Իրանի դեսպանի քննարկումներին։ Այդ քննարկումների եւ տեսակետների փոխանակումից հետո միայն կարող ենք խոսել Ղարաբաղի խնդրում Իրանի դերի կարեւորության մասին։ Եվ եթե այդ քննարկումներից եւ տեսակետների փոխանակումից հետո չզգացվի հաջողությունը, Իրանը պատրաստ կլինի Ղարաբաղի խաղաղ կարգավորման հարցում անկախ գործունեություն ծավալել», ասում է Իրանի արտգործնախարարի խորհրդական, ԱԳՆ ԱՊՀ գլխավոր վարչության պետ պարոն Ղոլաքաբադին։

Ըստ իրանցի դիվանագետի, Իրանը կովկասյան տարածաշրջանում «կարեւորագույն պետությունն է եւ ամեն անգամ, երբ ստորագրվում է խաղաղության որեւէ համաձայնություն, անհրաժեշտ է իրանական կողմի հաստատումը»։ «Մինսկի խումբը յոթ տարի ջանքեր է գործադրում, փորձում հասնել հարցի խաղաղ կարգավորման։ Համանախագահող պետությունները լավ են հասկանում հակամարտությունների կարգավորման եւ ճգնաժամերի հաղթահարման մեջ տարածաշրջանի կարեւորագույն երկրների դերը։ Ահա այս պատճառով նրանք ցանկություն հայտնեցին տեղեկացնել Իրանին», պատասխանելով մեր՝ «Ինչո՞ւ Ֆլորիդայի բանակցությունների արդյունքների մասին որոշվեց տեղեկացնել պաշտոնական Թեհրանին» հարցին, նշեց պրն Ղոլաքաբադին։

Տես ➧ էջ 5

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

# Արկադի Ղուկասյան. «Փարիզյան սկզբունքները ձախողել է Ադրբեջանը»

*Ղարաբաղում ադրբեջանական համայնք գոյություն չունի*

**ԳՈՌ ՍԱՐԳՍՅԱՆ**

Նախքան Ազգային ժողովի այս նստաշրջանի վերջին եռօրյայի մեկնարկը, ԱԺ խումբ-խմբակցությունների ղեկավարները, հանձնաժողովների նախագահները եւ ԱԺ ղեկավարությունը հանդիպեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Արկադի Ղուկասյանի եւ ԱԺ նախագահ Օլեգ Եսայանի հետ՝ վերջիններիս նախաձեռնությամբ։ Ինչպես պարզաբանեց ԼՂՀ ԱԺ խոսնակը. «Այսօրվա հանդիպման ընթացքում եկանք այն եզրակացության, որ անհրաժեշտ է կազմակերպել մեր հանրապետության ղեկավարության պարբերական հանդիպումները Հայաստանի խորհրդարանի ղեկավարության հետ։ Օգտվելով նրանից, որ ԼՂՀ նախագահն աշխատանքային այցով գտնվում է Հայաստանում, օգտագործեցինք հարմար առիթն այդ շրջանակներում առաջին հանդիպումը կազմակերպելու համար։ Հայաստանի խորհրդարանը քննարկում եւ քննարկելու է ղարաբաղյան թեմային առնչվող տարբեր հարցեր, եւ պատգամավորները պետք է բավարար տեղեկություններ իմանան Ղարաբաղի ներքաղաքական եւ արտաքին քաղաքական ուղղություններով ընթացող եւ ընթանալիք աշխատանքներից։ Եվ ճիշտ կլինի, որ այդ տեղեկությունները նրանք ստանան անմիջապես հանրապետության ղեկավարությունից»։

Հանդիպումից հետո ԼՂՀ ղեկավար Արկադի Ղուկասյանը պատասխանեց հայաստանյան լրագրողների հարցերին։

Տես ➧ էջ 3

# Ռուսաստան-Բելառուս միությանն անդամակցությունը Հայաստանի քաղաքական օրակարգում չկա

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը հունիսի 10-ին ընդունել է Ռուսաստանյան Դաշնության Դաշնային ժողովի Պետական դումայի նախագահ Գենադի Սելեզնյովի գլխավորած պատվիրակությանը, որի կազմում ընդգրկված են ներկայացուցիչներ Պետդումայի բոլոր պատգամավորական խմբակցություններից եւ խմբերից։

Ինչպես տեղեկացնում է ՀՀ նախագահի մամլո գրասենյակը, Ռոբերտ Քոչարյանը երկկողմ կապերի զարգացման գործում բարձր է գնահատել խորհրդարանական դիվանագիտության դերը։ Գենադի Սելեզնյովը հանրապետության նախագահին տեղեկացրել է արդեն իսկ ունեցած հանդիպումների եւ քննարկումների, ձեռք բերած պայմանավորվածությունների մասին։ Ըստ նրա, կարեւորվել են Կովկասյան քառյակի շրջանակում միջխորհրդարանական շփումները։

Փաստելով հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների բարձր մակարդակը, զրուցակիցները միեւնույն ժամանակ ընդգծել են, որ դեռեւս լիարժեք չի օգտագործվում տնտեսական ոլորտում առկա ներուժը։ Առեւտրատնտեսական հարաբերությունների զարգացման հիմնական խոչընդոտը շարունակում են մնալ տրանսպորտային խնդիրները, որոնք հնարավոր է լուծել «Կովկաս» լաստանավային նավահանգստի կառուցման միջոցով։

Հյուրերի խնդրանքով իր տեսակետը ներկայացնելով Ռուսաստան-Բելառուս միությանը Հայաստանի հնարավոր անդամակցության վերաբերյալ, Ռոբերտ Քոչարյանը նշել է, որ այդ հարցը Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում չկա։ Ընդգծելով, որ Հայաստանն այսօր բավականին բարձր մակարդակի երկկողմ հարաբերություններ ունի եւ Ռուսաստանի, եւ Բելառուսի հետ, նա միաժամանակ ասել է, որ ամենեւին պարզ չէ, թե ինչ կարող է ավելացնել արդեն իսկ ձեւավորված հարաբերություններին այդ միությանն անդամակցելը։

Հանրապետության նախագահը պարզաբանումներ է տվել նաեւ ղարաբաղյան հակամարտության կարգավորման ընթացքի վերաբերյալ։



# Պուտինը հաստատեց ռազմատեխնիկական համագործակցության զարգացման երկու հայեցակարգ

ՄՈՍԿՎԱ, 11 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ։ Հունիսի 9-ին Կրեմլում արտասահմանյան երկրների հետ ռազմատեխնիկական համագործակցության հարցերին նվիրված խորհրդակցության ժամանակ, որը կայացել է ՌԴ նախագահ Վ. Պուտինի նախագահությամբ, հաստատվել են այդ բնագավառում Ռուսաստանի պետական քաղաքականության երկու հայեցակարգեր։

Ինչպես հաղորդում է ՕՌՏ հեռուստաալիքը, ՌԴ նախագահը հայտարարել է, որ «մենք պետք է հստակ որոշենք ռազմատեխնիկական համագործակցության բնագավառում մեր փոխգործունեության հայեցակարգերը ինչպես հեռավոր արտասահմանի երկրների, այնպես էլ Կոլեկտիվ անվտանգության պայմանագրին մասնակից պետությունների՝ Հայաստանի, Կիրգիզիայի, Ղազախստանի, Բելոռուսիո եւ Տաջիկստանի հետ»։ «Ռազմատեխնիկական համագործակցությունը Կոլեկտիվ անվտանգության պայմանագրի շրջանակում պետք է ամեն կերպ նպաստի Պայմանագրի մեջ մտնող պետությունների անվտանգության ամրապնդմանը», ընդգծել է նա։

Այնուհետեւ խորհրդակցությունը շարունակվել է փակ դռների ետեւում, եւ միայն երկու ժամ անց հայտնի են դարձել որոշ արդյունքներ։ Փաստաթղթերից մեկը, ուր խոսվում է արտասահմանյան պետությունների հետ համագործակցության մասին, նախատեսված է մինչեւ 2010 թվականն ընկած ժամանակաշրջանի համար։ Մյուս փաստաթուղթը, ուր խոսվում է Կոլեկտիվ անվտանգության պայմանագրի երկրների հետ համագործակցության մասին, նախագահն անվանել է առաջնային։ «Այդ երկրները մեր դաշնակիցներն են եւ հարաբերությունները նրանց հետ ռազմատեխնիկական համագործակցության բնագավառում պետք է կառուցվեն առանձին սխեմայով», ամփոփել է Պուտինը։

ՌԴ պաշտպանության փոխնախարար, ռազմատեխնիկական համագործակցության կոմիտեի նախագահ Միխայիլ Դմիտրիեւը հայտնել է նաեւ, որ նոր հաստատված հայեցակարգերին համապատասխան արդեն մոտ ժամանակներս կպատրաստվի Կոլեկտիվ անվտանգության պայմանագրի անդամ պետությունների հետ աշխատանքի պլան։ Նրանց համար կգործի հատուկ գնային քաղաքականություն։ Ռազմական տեխնիկայի գները այդ պետությունների համար կլինեն ավելի ցածր, քան Ռուսաստանի մյուս գործընկերների համար։

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

# Ներքաղաքական իրավիճակի քննարկումներ՝ շրջաններում

*Վանաձոր եւ Իջեւան այցի ժամանակ նշեց ՀՌԱԿ ատենապետ Ռուբեն Միրզախանյանը*

Օրերս ՀՌԱԿ ատենապետ Ռուբեն Միրզախանյանը, փոխատենապետ եւ «Ազգի» տնօրեն Հարություն Առաքելյանը, վարչության անդամ Գագիկ Վարդանյանը, այլ կուսակցականներ այցելեցին Վանաձորի եւ Իջեւանի ՀՌԱԿ մասնաճյուղեր՝ նորագիր անդամներին կուսակցական տոմսեր հանձնելու, նրանց հետ զրուցելու եւ հոգսերին տեղեկանալու նպատակով։



Վանաձորի ՀՌԱԿ գրասենյակում Ռ. Միրզախանյանի ձեռքով կուսակցական տոմսեր հանձնվեցին 24 անդամների. ընդամենը մեկ ամիս առաջ կուսակցությանն անդամագրվել էր եւս 24-ը։ Կուսակցության ղեկավարության բնորոշմամբ՝ Վանաձորի ՀՌԱԿ մասնաճյուղը չափազանց կազմակերպված է իր գործունեությունն իրականացնելիս։ Գրասենյակում տեղի ունեցավ 5 նորագիր անդամների երդմնառության արարողությունը։

Կուսակցության ղեկավարի հետ հանդիպման ընթացքում վանաձորցիները խոսեցին քաղաքական, տնտեսական եւ ներկուսակցական մի շարք հարցերի մասին։ Ռ. Միրզախանյանն անդրադարձավ երկրի ներքաղաքական կյանքում տեղի ունեցող անցուդարձին, սպասվող փոփոխություններին։

Տես ➧ էջ 2

